


---

---

ՀԵՆՐԻԿ ԲԱՆՉԻՆԵԱՆ. Գրիգոր Նարեկացու Գանձարանը. վերծանություն և քննություն. Լիբանան, Հ.Բ.Ը. միութեան Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի հրատարակություն, 376 էջ:



Գրիգոր Նարեկացու գրական-գեղարվեստական բազմաժանր ժառանգության մեջ ինքնատիպ և արժեքավոր մաս են կազմում նրա գանձերն ու տաղերը, որոնք բանաստեղծի մյուս գործերի հետ սկզբից նեթ լայն ճանաչում են գտել և ունեցել բազմաթիվ ձեռագիր ընդօրինակություններ ու մեկնություններ, իսկ տպագրության գյուտից հետո արժանացել են հրատարակությունների, վերահրատարակությունների, նաև՝ նորովի մեկնաբանությունների<sup>1</sup>: Մեծահանձար բանաստեղծի գանձերի և տաղերի վերաբերյալ գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ. կատարված են բանասիրական, գրականագիտական քննություններ, տաղերի և գանձերի մի մասի աշխարհաբար փոխադրություններ (տե՛ս էջ 9): Սակայն, այդքանը դեռևս լիովին բավարար չէ անմիջականորեն և խորությամբ ընկալելու և ըմբռնելու Նարեկացու տաղերի ու գանձերի բովանդակությունը: Գաղտնիք չէ, որ նա շատ հաճախ կիրառել է խրթին ոճեր, դարձվածներ ու արտահայտություններ, որոնք երբեմն տառապում են անհասկանալիության հասնող կնճռոտ մանվածապատություններով, բարդացնում և դժվարացնում են տաղերի ու գանձերի բազմաթիվ հատվածների ու պարբերությունների ընկալումն ընթերցողների մեծագույն մասի համար: Ահա նաև այս խնդիրները հաղթահարելու նպատակով 2016 թ. հայտնի միջնադարագետ Հենրիկ Բախչինյանը հրապարակ բերեց իր հերթական մեծարժեք ուսումնասիրությունը՝ «Գրիգոր Նարեկացու Գանձարանը. վերծանություն և քննություն» վերնագրով:

---

<sup>1</sup> Տե՛ս Գրիգոր Նարեկացի. Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Արմինե Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 8:

Աշխատությունն ունի “Մուտք”, որտեղ գիտնականը հատկապես հիմնավորում է Նարեկացու տաղերի և գանձերի քննական վերծանության անհրաժեշտությունը՝ խոստովանելով, որ մանավանդ տաղերի պարագայում դա չափազանց բարդ աշխատանք է, քանի որ, ինչպես և տարբեր ուսումնասիրողներից (Հր. Աճառյան, Մ. Աբեղյան, Ա. Ղազինյան) մեջբերված դիտարկումներն են փաստում, բանաստեղծը “երբեմն “մեղանչել է” լեզուական կանոնների դէմ՝ առաւել դժուար ընկալելի դարձնելով իր առանց այդ էլ բարդ լեզուն ու ոճը”, օգտագործված շատ բառեր “ինքնահնար կամ անգործածական” են, հաճախ՝ անբացատրելի: Տաղերի ու գանձերի որոշ տողերի ու դրվագների դժվար ընկալելիությունը Բախչինյանը պատճառաբանում է նաև բանաստեղծի կիրառած այլաբանություններով, խորհրդանիշներով, աստվածաշնչյան անունների ու դրվագների հիշատակումներով և այլ պատճառներով (տե՛ս էջ 7–8): Չորջանցելով նախորդների կատարած աշխատանքի նշանակությունը Նարեկացու տաղերի և գանձերի աշխարհաբար տողացի վերածումների գործում՝ աշխատության հեղինակը գտնում է՝ նման վերածումները, միևնույն է, չեն ներկայացնում տաղերի “իմաստային խորքերը”, և պատճառը ոչ միայն այն է, որ այդ տաղերը երբեմն ճիշտ չեն ընկալվել ու մեկնաբանվել, այլև՝ մի շարք տաղեր պարզապես ենթակա չեն տողացի աշխարհաբար վերածման:

Որպես նախօրինակ ունենալով Գ. Աբգարյանի՝ Նարեկացու “ամենաիմաստուն”, “ամենահռչակված տաղերից մեկի” (Գևորգ Աբգարյանի բնորոշումներն են)՝ “Հարության տաղի” քննական վերծանությունը<sup>2</sup> Բախչինյանն իր այս գրքում արել է նույնը՝ Նարեկացու բոլոր հայտնի տաղերի ու գանձերի համար: Գիտնականի այս նախաձեռնությունն ավելի քան կարևոր է, որովհետև Նարեկացու գանձերի ու տաղերի վերծանողները տաղաչափական և պատկերավորման չափանիշները պահպանելու մղումից երբեմն բնագրի մոտավոր իմաստն են հաղորդել: Մինչդեռ խոսքի գիտական հիմքը պետք է լինի միայն բնագիրը և նրա անթերի ընկալումը:

Հ. Բախչինյանի աշխատությունն ընդգրկում է Նարեկացու հեղինակային Գանձարանը՝ ուսումնասիրողի վերակազմությամբ և ժողովածուն բովանդակող գանձերի, տաղերի ու փոխերի բնագրերի ճշգրտմամբ<sup>3</sup>: Իր աշ-

<sup>2</sup> Տե՛ս Գ. Աբգարյան. Վերծանություն Գրիգոր Նարեկացու “Հարության տաղի”.– “Էջմիածին”, 1974, - Ա, էջ 42–48, - Բ, էջ 39–48:

<sup>3</sup> Գ. Նարեկացու Գանձատետրի գանձակազմերի հերթականության և ընդգրկման հեղինակային փոփոխությունների ու բնագրերի համար կիրառած սկզբունքների մասին տե՛ս էջ 341–342:

խատանքին մոտենալով բացառիկ խնամքով ու աչալրջությամբ՝ բնագրերը ներկայացնելիս հեղինակը չի բավարարվել Նարեկացու գանձերի և տաղերի՝ Գանձարան ժողովածուների լավագույն հետազոտող Ա. Քյոշկերյանի աշխատությամբ 1981 թ. Երևանում լույս տեսած գիտաքննական ժողովածուով: Որքան էլ նա հիմնվել է այդ ժողովածուի վրա՝ ընդգծելով դրա առավելությունները, այնուամենայնիվ, կատարել է բնագրային որոշ փոփոխություններ և միջամտություններ՝ ըստ սվյալ հրատարակված գանձի կամ տաղի ձեռագրական տարրնթերցվածների կամ ըստ իմաստի (այստեղ հարկ չենք տեսնում բերել ապացուցող փաստեր): Գատարել է նաև բանասիրական ճշտումներ, որոնց մի մասը վերաբերում է Նարեկացուն վերագրվող առանձին տաղերի հեղինակային պատկանելության հարցերին: Իր այս և այլ կարգի նկատառումները Հ. Բախչինյանը տեղադրել է գրքի վերջում՝ «Բնագրային ծանուցումներ» բաժնում, որտեղ յուրաքանչյուր տաղի կամ գանձի վերաբերյալ, բնագրային ծանուցումներից բացի, հաճախ մատուցում է նաև բանասիրական նշանակության տարատեսակ տեղեկություններ, որոնք խիստ օգտակար ու արժեքավոր կարող են լինել ուսումնասիրողների մեծ մասի իմացության համար:

Գիրքն ունի հետաքրքրական ներածություն, որտեղ Հ. Բախչինյանը քննում է Նարեկացու ստեղծած գրական նոր ժանրերի ծագումնաբանությունը և Գանձարանի կազմավորումը: Նախ անդրադառնալով ժամագրքային աղոթքին՝ նա հակիրճ ներկայացնում է դրա բովանդակային ու կառուցվածքային առանձնահատկությունները և որոշում, որ վերջինիս հիման վրա կամ հետևությամբ է Նարեկացին ստեղծել բանաստեղծական աղոթքի ժանրը՝ աղոթական բանքը: Այդ տեսակի մեջ է նա հորինել իր Աղոթամատյանը, որի ժանրային պատկանելիության հարցի վերաբերյալ բաղդատելով տարբեր նարեկացիագետների (Մ. Աբեղյան, Ա. Ղազինյան, Հ. Միրզոյան, Հ. Թամրազյան) տարբեր կարծիքներն ու օգտագործած եզրույթները՝ ինքը՝ գիտնականը, առանձնապես հարկ չհամարելով մտնել բանավեճ հարուցող տարաձայնությունների հորձանուտ, գտնում է՝ Նարեկացու Մատյանը հիմնականում ունի ողբական տրամադրություն ու հնչերանգ, և այն «կարելի է համարել ողբ-ողբերգութիւն (ողբասացութիւն իմաստով), եւ ընդունելի է նաեւ «Մատեան Ողբերգութեան» խորագրումը»: Եվ անմիջապես բացատրում է. «Բայց ողբը սոսկ երկի բովանդակային բնութագրիչն է, ընդ որում՝ ոչ լիարժեք, քանի որ ողբից գատ Մատեանն ընդգրկում է նաեւ օրհնութիւն, ներբող, պարսաւ, խրատ, աղերս, ապաշաւանք եւ այլն» (էջ 17): Մինչդեռ ձևային մակարդակում «Մատեան

ողբերգութեան” երկը բանք է, աղոթական բանք՝ հիմնականում ողբական հնչերանգով:

Ներածության հետագա շարադրանքում Հ. Բախչինյանն այս անգամ ներկայացնում է ժամագրքային քարոզի ժանրային ու բովանդակային առանձնահատկությունները՝ դրանք ծանոթագրելով “Նոր հայկազեան բառարանից” և տարբեր գիտնականների աշխատություններից մեջբերված քաղվածքներով, և բացատրում, որ Նարեկացին, իբրև նախօրինակ ունենալով հենց ժամագրքային քարոզը, ստեղծել է նոր՝ գանձի կամ բանաստեղծական քարոզի տեսակը: Բհարկե, և՛ քարոզների ու գանձերի աղերսների ու տարբերությունների, և՛ առհասարակ Գանձարանների ու գանձարանային միավորների մասին հարցերն արդեն արծարծվել են բանասիրության մեջ, մասնավորապես՝ Ա. Քյոշկերյանի կողմից<sup>4</sup>, և նոր հետազոտողից պահանջվել է, ըստ էության, բացառապես հաստատող գնահատական դրանց վերաբերյալ: Ընդհանրապես թե՛ այստեղ և թե՛ հետագա շարադրանքում եթե հեղինակը հաճախ օգտվում է նախորդող ուսումնասիրողների գրականագիտական քննություններից, ապա այլոց գնահատականներն ու եզրահանգումները չեն միայն, որ դարձել են փաստարկներ Հ. Բախչինյանի համար: Իր հիմնավորումներում գրականագետը ելել է բուն նյութի խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունից, գիտական դիպուկ, բնորոշ բացահայտումներից:

Հ. Բախչինյանը գտնում է, որ Գ. Նարեկացին ունեցել է իր անհատական Գանձարանը՝ համակարգված գանձ-տաղ-փոխ միավորներից, որոնք ինքն առաջարկում է անվանել “գանձակազմ” գանձարանային կանոնի կամ գանձ-շարքի փոխարեն: Այնուհետև ուսումնասիրողը, թերևս, առավել բացատրական նպատակով, ըստ Ա. Քյոշկերյանի պարզաբանումների, ներկայացնում է գանձերի և տաղերի էությունը, կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց միջև եղած ընդհանուրն ու տարբերությունները:

Աշխատության ներածությանը հաջորդում է “Գանձարանի վերծանությունը” գլուխը, որը ծավալով ամենամեծն է, ինչը և բնական է: Այստեղ աշխատասիրողը, Նարեկացու գանձերն ու տաղերը դիտարկելով մեկ ամբողջություն կազմող ժողովածուի՝ Գանձարանի մեջ, որոշ չափով վերանայելով Ա. Քյոշկերյանի վերակազմած Գանձտետրը և նրա հրատա-

<sup>4</sup> Տե՛ս Գրիգոր Նարեկացի. նշվ. աշխ., էջ 9–51, ինչպես նաև՝ Ներսես Շնորհալի. Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Արմինե Քյոշկերյանի, Երևան, 1987, էջ ԺԶ–ԻԲ, Ա. Քեօշկերեան. Գանձարանային մշակոյթ. սկզբնաղբում եւ զարգացում (Ժ–ԺԳ դարեր), Երևան, 2008, էջ 5–46:

րակած բնագրերը, նախ հատվածաբար՝ դրվագ առ դրվագ, ներկայացնում է համապատասխան գանձակազմի գանձը, ապա անջատաբար՝ նրան զուգակից հանդես եկող միավորները, եթե, իհարկե, ունի տվյալ գանձը: Յուրաքանչյուր, իր իսկ կողմից ճշգրտված բնագրային միավորին կից Բախչինյանը տալիս է դրա արևելահայերեն արձակ վերծանությունը, իսկ հետո կատարում բովանդակային մեկնություններ ու ծանոթագրություններ:

Մեր համոզմամբ՝ հենց այսպիսին պետք է լինեն փոխադրությունները, որոնք ճիշտ են կատարում թե՛ իրենց գրական-բանասիրական դերը և թե՛ օգնում կարդացող-ուսումնասիրողին համեմատաբար հեշտ ընկալելու գանձերի բովանդակությունը: Նման գործը պահանջում է ոչ միայն եռանդուն և տքնաջան տևական աշխատանք, այլև՝ գրաբարի փայլուն իմացություն, այն էլ X դարի գրաբարի, որն այսօր, թերևս, մեզանում անմնացորդ կարող է հասկանալ լոկ մասնագետների մի նեղ խումբ:

Իսկ ինչ վերաբերում է գիտնականի՝ Նարեկացու բանաստեղծությունների մեջ “մարմնավոր իրերին”, հոգևոր խորհուրդներին և խորհրդանշաններին տված մեկնություններին, չի կարելի կարդալ և մի ջերմ գործվանք չսպրել դրանց վարպետության առթիվ, առավել ևս, երբ գիտես, որ այդ ստեղծագործությունների ծանրակշիռ մասն առաջին անգամ է առնվում նմանօրինակ լուսաբանման: Հայտնի է, որ Գրիգոր Նարեկացին իր տաղերում հոգևոր բովանդակության արտահայտման այլաբանական եղանակին է դիմել “համարյա բացառապես այն դեպքերում, երբ աստվածաբանական խրթին ընդհանրացումներ է ցանկանում կատարել, կամ կրոնական հույզեր արտահայտել”<sup>5</sup>: Ուրեմն միայն պատկերացնել կարելի է, թե ինչ ջանք ու եռանդ, իմացություն է պահանջվել մեծավաստակ գիտնականից՝ իրականացնելու այսպիսի մի աշխատություն: Բնագրի հմուտ քննությամբ Հ. Բախչինյանը հասել է Նարեկացու գանձերի, փոխերի ու տաղերի այլաբանական բովանդակության բացահայտմանը:

Հայտնի է նաև, որ ստեղծագործություններում շատ հաճախ իր մտքերն ավելի ընկալելի դարձնելու, գործածած պատկերների ու համեմատությունների իմաստները բացահայտելու համար Նարեկացին բազմիցս դիմում է Աստվածաշնչի օգնությանը, երբեմն նույնիսկ խոսում ու մտածում է այդ գրքի լեզվով, մի բան, որ անպայմանորեն պահանջ է դնում ոչ միայն մանրամասն ծանոթագրման, այլ նաև՝ բացատրության, ինչը որ դարձյալ գերազանցորեն կատարել է Հ. Բախչինյանը:

<sup>5</sup> Մ. Մ կ ր յ ա ն. Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 158:

Ուսումնասիրության հաջորդ՝ «Գանձարանի քննութիւնը» գլխում, հեղինակն իր կատարած վերծանությունների հիման վրա արդեն քննում է Նարեկացու Գանձարանի գաղափարական-գեղարվեստական արժեքը: Հենց սկզբից՝ նախքան բուն նյութին անցնելը, գիտնականը նկատել է տալիս, որ Նարեկացու Գանձարանի առանցքն աստվածերգությունն է՝ եկեղեցական տոների թեմատիկ հենքի վրա (էջ 253): Այս միտքը, որ նույնությամբ երկրորդվում է գլխի ամփոփման սկզբում, հեղինակի կողմից չի տարրալուծվում: Սակայն, կարծում ենք, ճիշտ ենք ընկալել ուսումնասիրողի մտադրությունը. Նարեկացու տաղերը, որքան էլ թեև շատ հաճախ ունեն տեսանելի, իրական, կենդանի պատկերներ և առաջին հայացքից կարող են անգամ ընկալվել զուտ աշխարհիկ իմաստով, միննույն է, իրենց գլխավոր գործառությամբ ունեցել են ծիսական-կիրառական նշանակություն: Ըստ այդմ՝ դրանք պետք է նախ ըմբռնել ու արժևորել բուն ծիսական գործառույթի առումով, ապա դրանց հոգևոր բովանդակության ու խորհրդի բացահայտումից հետո նոր միայն, պայմանավորված տվյալ եկեղեցական տոնի էությամբ, մեկնաբանել դրանց այլաբանական բովանդակությունը: Չէ՞ որ միայն նման մոտեցման դեպքում, առանց տաղն անջատելու Գանձարանից և իր կիրառական նշանակությունից, հնարավոր կլինի այն գնահատել որպես գանձարանային ստեղծագործություն և տեսնել կամ նկատել նրա հոգևոր բովանդակությունը, մանավանդ այն տաղերի, որոնց հոգևոր բովանդակությունը վերոնշյալ արտաքին տպավորության պատճառով կարող է ակնբախ չլինել:

Գիտնականը հանգամանորեն մեկնաբանում, բացատրում է աստվածային էության տարբեր հատկանիշները բնութագրող մակդիրները, փոխաբերություններն ու խորհրդանշանները, որոնք առկա են Գանձարանում: Նա Նարեկացու խորհրդաբանության մեջ կարևոր տեղ ունեցող յուրաքանչյուր խորհրդանիշ-այլաբերություն հայտնաբերում է տարբեր գանձերի ու տաղերի համատեքստերի մեջ, նաև բացատրում, թե որտեղից, ուր կամ ում ստեղծագործությունից կարող է մակաբերված լինել այդ խորհրդանիշը, որը երբեմն մշակել կամ որին բանաստեղծը զուգորդել է որոշ այլաբերություններ, կամ որն է նրա բանաստեղծական երևակայության ծնունդը: Հ. Բախչինյանն իր վերծանությունների համար հաշվի է առել ու կարևորել, ինչը շատ էական է, նաև՝ «Երգ երգոց»-ի մեկնության մեջ Գրիգոր Նարեկացի մեծ տեսաբանի ու աստվածաբանի տեսական-գեղագիտական հայացքներն ու ըմբռնումները:

«Գանձարանի քննութիւնը» գլխում ուշադրությունից չի վրիպում այն, որ բանասերի վերլուծությունները կամ ծանոթագրությունները հաճախ

ընդմիջվում կամ ավարտվում են ուշագրավ եզրակացություններով: Դրանց մի մասը, ճիշտ է, թեև արդեն արժարծվել է նարեկացիագիտության մեջ (ի դեպ, Ն. Բախչինյանը շատ հաճախ բուն շարադրանքում կամ տողատակի ծանոթագրություններում քաղվածքաբար մեջ է բերում տարբեր նարեկացիագետների կարծիքները, դրանք բաղդատում կամ հակադրում միմյանց, երբեմն էլ մեկը լրացնում մյուսով), և եթե անգամ մտածենք, որ Ն. Բախչինյանից առավել գուցե պահանջվել է հաստատող, ճշգրտող հայացք, ապա, միևնույն է, նա իր մտահանգումներին հասել է Նարեկացու աշխարհընկալման օբյեկտիվ իմաստավորմամբ, նրա տաղերի մանրախույզ ընթերցմամբ ու դրանց խորհրդարանության ճշգրիտ ընկալմամբ: Նա խորն է զգացել ու բավական հանգամանալից վերլուծել Նարեկացու բանաստեղծական հորինումների գաղտնիքներն ու «ծածուկ» մտքերը, համակողմանիորեն բացահայտել նրա տաղերգության գրեթե բոլոր օրինաչափությունները, մեկնաբանել Գանձարանին առնչվող ստեղծագործական բազմաբնույթ երևույթների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ունենալ ոչ միայն բնական շնորհք, այլև ստեղծագործական մեծ փորձ ու աշխատանքային եռանդ: Ահա հատկանիշների այս համաձուլվածքի շնորհիվ է ստեղծվել անվերապահորեն բարձրարժեք, ստվարածավալ այս ուսումնասիրությունը: Այն հայ միջնադարյան և առհասարակ հայ գրականության մասնագետների համար միանգամայն անհրաժեշտ աշխատություն է՝ Նարեկացու հեղինակային Գանձարանի մասին հստակ պատկերացում կազմելու համար, մանավանդ եթե նկատի ենք ունենում Նարեկացու բոլոր հայտնի տաղերի և գանձերի արձակ արևելահայերեն քննական վերածումներն ու բովանդակային մեկնությունները, որոնք նյութի ընդգրկման ծավալով և կատարման վարպետությամբ նախադեպը չունեն:

Վերջում հավելենք, որ Ն. Բախչինյանի գրքում գուցե հեղինակային որոշ ենթադրություններ հետագա ստուգման կարիք զգան, ինչ-որ դրույթներ էլ կարող են առարկության տեղիք տալ, որոնց մասին ակնարկում է նաև ինքը՝ հեղինակը, սակայն դրանք, մեր համոզմամբ, կարող են միայն մասնակի նշանակություն ունենալ, քանի որ գործ ունենք միանգամայն գործնական, զուտ գիտական շարժառիթի և կատարման հետ:

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ